ՓԱՒՍՏՈՍ ԲԻԶԱՆԴ

ԿԱՄ

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Շար. տես յէջ 433)



ԱՅՍ կղերին կեսարիոյ հետ ունեցած սերտ յարաբերութեան պատճառաւ, Ս. Բարսղի նման անձնաւորութիւն մի պէտք էր ամենամեծ ազդեցութիւն գործել մնացեալ լեռնագաւառաց վրայ. և յիրաւի, փաւստոս ասկաւին բոլորովին զիւթուած է այսպիսի կարող անձնաւորութեան մի ազդեցութեամբ։ Ղեբսէս՝ Հայաստանի թուլման Բէքն է։ Շքեղ պալատականն կը դառնայ կը լինի ամենէն աւելի եռանդուն քահանայն, և միանգամայն նուիրապետ մի՝ որ անդուլ և առանց ակնառութեանց իւր նպատակին կ'ուղէ հասնիլ։ «Զթայրէական սթոռն միւսանգամ ելից, և իւրոց հարցն նմանեալ օրվի եղև [1]»։ Շատ նշանաւոր եղաւ նոր կաթողիկոսին նախագահութեամբ գումարուած Ազգաշատի մեծ ժողովն։ Դիւրաւիրաբար պատմիչն՝ նոյն ժողովոյն գործոց և որոշմանց վրայ՝ շատ սակաւ իսկական տեղեկութիւններ կու տայ մեզ, մինչ կը նոխանայ ընդհանուր գովաբանական բացատրութեամբք։ Ամենայն եկեղեցական նոր կանոնադրութիւն մի հաստատուեցաւ, և հաւատոյ մասանց կամ վարդապետութեանց նոր ժողովածոյ մ'եղաւ [2]։ Որոշուեցաւ դարձեալ որ առաքելական կանոնք ամենուն համար էս պարտաւորիչք լինին։ Կենաց համար կարևորք էին մասնաւորապէս նոր և աւելի խրատագոյն ամուսնական կանոնք (արգելեալ խրատնամութեանց նկատմամբ), և կերակրոց մասին դրուած պատուէրներն, զի հին հայկական եկեղեցին՝ այս ամէն բանի մէջ՝ պէտք էր համաձայնիլ բոլսնդական քրիստոնէութեան։ Թէ ուրչափ խիստ և ընդարձակ էին այն կարգադրութիւնք՝ կրնանք պատմչին խօսքերէն հետևցրնել, որ գրուցած կ'ըսէ, թէ Ս. Ղեբսէս կ'ուզէր զրեթէ բոլոր հայ ժողովուրդը՝ մեծ վանական միաբանութեան մի փոխել։ Ի բաց առեալ ամուսնութիւնը՝ որ ներելի էր. «Յայնմ ժամանակի կարգեցին (կազմեցին կանոնեցին յորինեցին), և ապարին զանենայն ժողովուրդս երկրին Հայոց՝ իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն» (փաւստ. Դ, Դ)։ Ինչ-

---

1. Փաւստ. Դ, Գ։

2. Հաւանականաբար սաղմերէն կամ յունարէն։ Ըստ վկայութեան հնգմարտաբեր կոթեան, Նիկիոյ և Եփեսոսի ժողովոց յունարէն կանոնք քերուեցան ի Հայաստան ի դարու մէջ։ Ի մեռն Գ. Անդրեայ, Կորինեան և Եկեղեցոյ։ Ասի կը հետևի թէ այն կանոնները՝ զորս քերաւ Արիստակէս Նիկիոյէն՝ լոկ ինքնանոր գիւտ մ'են։ Այն յաւելուածներն այլ դարձեալ, զորս կ'ենթադրենք թէ Լուսաւորիչ ըստ, բնականաբար Ս. Սահակայ ժամանակէն առաջ չէին կրնար գոյութիւն ունենալ։ Հարկ չէ ըսել, թէ նոյնպէս Ս. Գրիգոր Լուսաւորչի ընծայուած հաւատքն (Յանձնագրաւոր կոչուած) շատ ժամանակ վերջը եղած անվաւեր և խարդախալ գրութիւնք են, ի բաց առեալ թերևս Ագաթանգեղոսի գրոց մէջ գտնուածները։

digitised by A.R.A.R.@

պէս իւր նախահայրն Գրիգոր, այսպէս այլ Ներսէս կը քարոզէր անձամբ, բնականաբար տեղւոյն բնիկ լեզուով, և եղաւ անձնանուէր առաջնորդ մի հոգւոց, ջանալով ամենայն կերպով ասորին գասակարգին վիճակը բարւոքել՝ թագաւորին և մեծամեծաց ձեռնտուութեամբ։

Ամէն բանէ աւելի զարմանալի է իրեն օրինակելի կազմակերպութիւնն՝ հիւանդները և օտարները դարմանելու մասին, որոց համար առանձին շէնքեր կառոյց բոլոր գաւառաց մէջ[1]։ Ս. Գրիգորի Նազիանզայցւոյ քարոզներուն ճառն և Ս. Բասիլի Թուղթերն կը ցուցնեն, թէ Ներսէս այս բանիս մէջ ևս պարզապէս հետևեցաւ այն բարեկարգութեանց, զոր յիշեալ սուրբ հայրն եկեղեցւոյ մեծեր էր դասաւորելիոյ մէջ։ Մուրդուութիւնը՝ որ Հայաստանի և բոլոր արևելքի ընդհանուր հարուածն էր՝ բոլորովին արգիլեց Ս. Ներսէս։ Ամէն գաւառաց մէջ այլ աղքատանոցներ հաստատեց նա՝ ի պէտս կարօտելոց, որոց վերայ յատուկ վերակացուներ դրաւ։ Նմանապէս իւրաքանչիւր գիւղից և աւանաց մէջ հիւանդանոցներ և օտարներուն համար հիւրանոցներ շինեց, և նոցա մասնաւոր հոգաբարձուներ կարգեց, և իւրաքանչիւր հաստատակութիւն պարտական էր ինքնին զարմանել նոցա պէտքը։ Փաստոս կը վկայէ թէ Ս. Ներսիսի ժամանակ բնաւ մուրացկաներ չէին տեսնուեր[2]։

Երիտասարդութեան ուսմանց և կրթութեան համար ևս բարեկարգութիւններ ըրաւ. Հայաստանի ամենայն գաւառաց մէջ յոյն և ասորի լեզուաց վարժարաններ հաստատեց։

Բայց ամէն բանէ աւելի զարմանալի է այն արտաքոյ կարգի յառաջադիմութիւնն, զոր ըրաւ միանձնական և ճգնաւորական կեանքն իրեն ազդեցութեան ներքև։ Վաղուց արդէն, այն գարուն սկիզբը, Դանիէլ ասորին՝ Աշտիշատի եկեղեցւոյն գլխաւոր քահանայն՝ մերթ ընդ մերթ անմարդի լերանց անապատներու մէջ ճգնաւորի կեանք կ'անցուներ, և ժողովուրդը կը յարգէր զինքը իբր աքանչելագործ։ Իւր սիրական բնակարանն էր Վահանի հին մեհենէն սակաւ մի հեռու գտնուած քարայր մի, ջնարքի և պուրակաձեւ ծորձորակի մի մէջ, որ Հացեաց դրախտ կը կոչուէր[1]։ Յետագայ հռչակաւոր երկու ճգնաւորքն, որոնք էին՝ Շաղիտա ասորին և յոյն Եպիփանը, Դանիէլի աշակերտք կը կոչուին[2]։ Սոքա Ս. Ներսիսի ժամանակ բազմահոյլ ճգնաւորաց խումբեր աշակերտեցին իրենց, և երեւելի հրաշագործներ կը համարուէին։ Ինչպէս սովորաբար անապատի ճգնազգեաց հարքն և Ցրամախօսութեան (Dialogus) սուրքն, այսպէս նաև սոքա կ'ապրէին անվնաս՝ վայրի գազանաց մէջ, առիւծներու, արջերու և ինձերու հետ։ Այն ճգնաւորքը մեծ գործ մի կատարեցին։ հարաւային կողմերը, որոնք իրենց լեզուով կը զանազանէին Հայաստանի միւս մասերէն, իրենց ձեռքով դարձան ի քրիստոնէութիւն։ Եպիփան իբր առաքեալ մի գործեց և քարոզեց Մեծ Նոփաց և Աղձնեաց աշխարհներուն ասորի ժողովրդեան մէջ, իսկ Շաղիտա՝ Կորդուաց երկրին մէջ։ Անձիտ գաւառին առաքեալն՝ Յոհաննէս, որ նոյնպէս ազգաւ ասորի էր, բերանացի անստոյգ աւանդութեան մի համեմատ՝ աւելի մանկահասակ (զի ծաղկեցաւ դրեթէ 400ին միջոցները), շատ մեծ յաջողութիւններ ունեցաւ՝ կատարեալ կերպով հմուտ լինելով տեղւոյն լեզուին[3], որ է՝ որտայերենի[4]։ Այն կրօնաւորաց և ճգնաւորաց քրած գործը չենք կարող գրուատել ըստ բաւականի, որովհետև նոցա քարոզութեանց արդիւնքն է միայն՝ որով Հայաստան ստուգիւ քրիստոնեայ երկիր մը դարձաւ։ Ս. Ներսիսի և իրեն յաջորդաց ժամանակ։ Ոստի Փաւստոս, խօսելով նշանաւոր Գինդ ճգնաւորին և իւր նմանեաց վրայ, կ'ըսէ. «Նոքա շատ հեթանոս տեղեր շրջեցան հեռա-

---

1. Փաւստ. Դ, Դ և Ե, ԼԱ։
2. Փաւստ. Ե, ԼԱ։

1. Փաւստ. Գ, ԺԴ։
2. Փաւստ. Ե, ԽԵ։
3. Joannis ep. Ephesi Commentarii de beatis Oriental. p. 182.
4. Թերևս քրդերէն՝ ըստ Նեոլդէքէի (ZDMG. 33, S. 165).

digitised by A.R.A.R.@

ւոր աշխարհներու մէջ, բազմաթիւ և ցը-
րուած հեթանոսներ զարձուցին իրենց մոլո-
րութենէն, և շատերը բերին ի գիտութիւն
յաւիտենական կենաց և ի ճանապարհն ճշ-
մարտութեան[1] »։ Այս կերպով զարգացաւ Ս.
Ներսիսի միջոց վանական և ճգնաւորական
կեանքն։ Օրինակ իմն, Ս. Եպիփան կը հա-
ւաքէ իւր շուրջը 500 կրօնաւոր և աշա-
կերտ. յայտնապէս կ'ուզեցուի թէ Ս. Ներ-
սէս այս մասին փոյթ տարաւ նաև կանանց
մեջ։ Աշխարհին իւրաքանչիւր գաւառաց
մէջ, ինչպէս նաև գլխաւոր տեղերը, կու-
սասանութեան հաստատեց, զորս պարապապա
ամրացուց աւելի ապահովութեան համար։
Այս միակ մարդս, որ լի էր այնպիսի զօր-
ծօնէութեամբ, իւր կաթողիկոսական սակաւ
ժամանակին մէջ գիտցաւ բոլորովին կերպա-
բանափոխ ընել հայ եկեղեցական կեանքը,
և մերձեցրնելով զայն յոյն քրիստոնէութեան՝
բառնալ իրեն յատուկ ազգային բնաղրաշմը։

Այլ պէտք չէ կարծել՝ թէ նուիրապետու-
թեան ի գործ դրած այս միջոցներն, որոնք
ոչ միայն կրօնական կենաց՝ այլ և ժողո-
վրդական բոլանդակ ընկերական կենաց վրայ՝
իւր ազդեցութիւն մի կը գործէին, ընդու-
նելի եղան առանց արգելիներու հանդիպե-
լու։ Ներսէս՝ իւր սակաւժամանակեայ հայ-
րապետութեան միջոց՝ սասսիկ ուժգնութեամբ
գործեց, որով բուռն հակազդեցութիւն մի յա-
ռաջ եկաւ։ Թագաւորական կուսակցութիւնն
բացարձակ կերպով թշնամի և հակառակ հան-
դիսացաւ նուիրապետութեան։ Սակայն ա-
ռաջին անգամ՝ չէր այս՝ որ եկեղեցական և
աշխարհական իշխանութիւնք իրարու հետ հա-
կառակութիւն ունեցան. վաղուց արդէն Ս.
Ներսիսի պապն (Ս. Յուսիկ) նզովեց Տի-
բան թագաւորը և ուրիշ մեծամեծներն շա-
տերը՝ յայտնի արիւնհեղութեանց և անբա-
րոյական գործոց համար, և զայն ամենա-
խիստ կերպով ըրաւ. որ է՝ հանդիսաւոր օր
մի մերժելով և արտաքսելով թագաւորը,
մինչ նա կ'ուզէր եկեղեցի մտնել։ Թագա-
ւորին հրամանաւ բրածեղ եղաւ նա, և այն-
պէս սասսիկ կերպով՝ որ մեռաւ. ուստի իւր
յաջորդքն ըստ ամենայնի հլու և հպատակք
եղան ամբարիշտ թագաւորին կամացը։ Տա-
բակոյս չի կայ՝ թէ Ս. Ներսիսի և Արշակ
թագաւորին մէջ եղած գժտութիւնն քարոյա-
կան պատճառէ[1] յառաջ եկաւ, թէ և փաւ-
տոսի այն բանին ընծայած շարժառիթն ժո-
ղովրդական զրոյցներու ևս պատկանելու լինի,
որ է՝ արար զայրոյթն Գնելի սպանութեան
համար և թագաւորին ամուսնանալն սպա-
նելոյն կնոջ հետ։ Սակայն ստուգիւ արքունի
զահուն և սեղանոյն մէջ ծագած գժտութեան
գլխաւոր պատճառք եղան քաղաքական շարժ-
առիթք։ Սաստիկ կերպով ընդդիմացան Ս.
Ներսէս և իւր տեղապահ Խոսրով եպիսկոպոսն
արքունի զաստակերտ Արշակաւանի կանգնե-
լուն, որ ապաստանի քաղաք եղաւ։ Այն
ամէն առանձնաշնորհութիւնք՝ զորս տուաւ
թագաւորն նոր քաղաքին բնակչաց՝ փուշ
մ'եղան յաչս քահանայից և ազնուականաց,
որովհետեւ նոցա հպատակներն և գաղթա-
կաններ խմբուին կ'երթային նոր քաղաքին
մէջ հաստատելու իրենց բնակութիւնը։ Կա-
թողիկոսն գանգատեցաւ՝ թէ այն նոր հիմ-
արկութիւնն բոլոր աշխարհին կործանման
պատճառ պիտի լինէր. և կ'ուզուէր որ նոյն
ինքն թագաւորն հրամայէր՝ որ նոր քաղաքացիք
իրենց հին բնակութիւնները դառնան. հետեւա-
բար կաթողիկոսն՝ այս դէպքիս մէջ՝ ազնուա-
կանութեան և եկեղեցական առաջնորդաց
արհամարհուած իրաւանց պաշտպան հանդի-
սացաւ։ Մ'իա կողմանէ քաղաքն երբէք չի
ծաղկեցաւ, և հակառակորդք յաղթանակեցին։

Ոլիմբիա թագուհւոյն թունաւորութէն վերջը
յայտնապէս գժտութիւն և հակառակութիւն
մնաւ Ս. Ներսիսի և թագաւորին մէջ, և
ասուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յա-
ւել տեսանել կերեսս թագաւորին Արշակայ՝

---

1. Փաւստ. Ե, ԺԶ։

1. Նոյն կերպով՝ ինչպէս վերջը պատահեցաւ Պապ թագաւորին հետ եղած գժտութիւնն։ Ս. Ներսէս խիստ բանիւք կը յանդիմանէ թագաւորը՝ իւր գարշելի մեղքերուն համար (Փաւստ. Ե, ԻԳ)։ Եկեղեցական պատմիչն բնական անտարբերութեամբ մի և առանց ոմ և է ակնածութեան կը խօսի այսպէսի վանգաւոր և կնճռոտ առարկայի մի վերայ (Դ, ԻԳ), որպիսի կը գտնենք միայն կիւրղի հայրապետին ներքինեաց վերայ խօսած քարոզին մէջ, որ թերևս կարող պիտի լիներ չառաջնորդել Զոլայ մի և կամ արդի բեյլինցի ցոփա-քան գրիչները։

digitised by A.R.A.R.@

մինչև յօրն Նորին կորստեան[1]»։ Սուրբ հայրապետն խզեց ի սպան եկեղեցւոյ և արքունեաց մէջ եղած յարաբերութիւնը. թագաւորն այլ հակառակութեամբ կաթողիկոս ընտրեց Զուանակ մէկը։ Սակայն Ներսէսի և կեսարիոյ եկեղեցւոյ առաջնորդաց մէջ սերտ բարեկամութիւն լինելով, և ոչ մտածուեցաւ անգամ ձեռնադրուելու զրկել զՁուանակ։ Նոյն իսկ հայ եպիսկոպոսունք, որք կանչուեցան թագաւորին հրամանաւ կաթողիկոսին ձեռնադրութեան, բնաւ յանձնառու չեղան և բացէ ի բաց մերժեցին. այլ միայն Ղազնեաց և Կորդուաց եպիսկոպոսները հաւանեցան, և գնացին կաթողիկոս ձեռնադրեցին Զուանակը՝ թագաւորին հրամանին համեմատ։ Բայց Ղազնիք և Կորդուք այն նահանգներուն մէջ կը գտնուէին, զոր յամին 363 շնորհեցին Հռովմայեցիք առ Պարսիկս. ապա անտարակոյս առանց թեմի և իշխանութեան կ'ապրէին այնտեղ, հայ արքունիքն իրենց մասնաւոր թոշակ յատկացնելով. սոյն բանս կը բացատրէ նոցա հլու հպատակութիւնը։ Դարձեալ շատ կարևոր կէտ մ'է այս ապօրինաւոր ընտրութիւնը, իբր հայ եկեղեցւոյ առաջին փորձ մի՝ կեսարիայէն բոլորովին անկախ գլուխ մ'ունենալու։

Ազգակայ արկածին պատճառաւ (յամին 367) երկրին քաղաքական և եկեղեցական դիրքն ի սպան կերպարանափոխ եղաւ։ Հռովմէական կայսերութեան միջամտութեամբ արքունի գահուն վերայ բազմեցաւ մանկահասակ Պապն. այն միջոց իրօք կատարեալ ներդաշնակութիւն մի կը տիրէր ազգնուական դասուն և եկեղեցականաց մէջ։ Թէև ստոյգ է, թէ թագաւորն և մեծամեծք շատ թախանձեցին՝ մինչև որ հաշտուեցաւ Ներսէս արքունեաց հետ[2], և սկսաւ զարձեալ մանուկցիլ տերութեան գործերուն՝ ամենայն յօժարութեամբ և հիմնական կերպով։ Հայաստանի հայրն «էր նոցա այնուհետև վերակացու և խրատատու, կարգիչ և առաջնորդ[3]»։

Բայց հազիւ թէ չափահաս եղաւ Պապ, եկեղեցական խնամակալութենէն ազատեցաւ։ Ս. Ներսէս մերժեց զինքը եկեղեցւոյ հաղորդութենէն իւր նողկալի անառակութանց պատճառաւ, եթէ ստոյգ է պատմչին ասածն։ թագաւորն չի համբակեցաւ բնաւ վնաս հասցուցեալ ազդեցութիւն ունեցող և ամենուն սիրելի հայրապետին. բայց եկեղեցական կուսակցութիւնն համարեցաւ՝ թէ նորա տարաժամ մահուան պատճառն եղաւ թագաւորին թունաւորելն։

Նոյն ժամանակները երևցաւ այնպիսի հանգամանք մի ընդդէմ եկեղեցականաց[1], որուն նմանը երբէք տեսնուած չէ՝ բայց միայն թշնամի քահանայից (Priesterfeind) կոչուած երիք թագաւորին միջոց, որ Նիդրասի (Drontheim) Եօրունդր (Jörundr) արքեպիսկոպոսը իրեն կոմս կամ եարլը (jarl) անուանեց[3]։

Դիտելի է դարձեալ, որ թէ Պապ և թէ երիք, սոյն գիտակցաբար բռնաբարողն եկեղեցւոյ իրաւանց, տակաւին անչափահաս պատանիք էին (Եկեղ. ժ, 16)։ Թէ Հայաստանի և թէ Նորուեգիոյ մէջ՝ յաջորդներն իսկոյն հանդարտութեան ջնջեցին հակառակորդական կառավարութեան ծրագիրը, միոյն մէջ՝ Մանուէլ Մամիկոնեան և միւսոյն մէջ՝ Հակոն Հալէզը։ Թէ ո՛վ աւելի լաւ ըմբռնեց իւր ժամանակին ոգին, հարկ չէ ըսել։ Պապ բուռն կերպով կուռեցաւ եկեղեցւոյ դէմ, և սկսաւ Ս. Ներսիսի հաստատած բռնանպակ

1. Փաւստ. Դ, ԺԵ։

2. Զուանակ այլ ևս չի յիշատակուիր այնուհետև. իւր սակաւուրիկ կաթողիկոսութեան պաշտօնն դադրեցաւ անչուչտ իւր պաշտպան թագաւորին գերութեամբն։

3. Փաւստ. Ե, Ա։

4. Հմմտ. Փաւստ. Դ, ԽԴ և Ե, ԻԲ։ Դիտելով թէ ինչպէս կուսակցական չափազանց ոգին յանուն կերպով կը ցնորաքանչ այս մասին, պէտք է մեծաւ զգուշութեամբ ընդունիլ սոյն տեղեկութիւնները։

2. Փաւստ. Ե, Կա։

3. Սոյն դէպքս Նորուեգիոյ պատմութենէն առնուած է. յիշեալ արքեպիսկոպոսն և երիք թագաւորն իրարու հետ թշնամանալով, թագաւորն յաղթանակեց՝ իրեն կուսակից ունենալով նաև եկեղեցական դասը, իսկ արքեպիսկոպոսն այնչափ խռովեցաւ՝ որ թագաւորին իշխանութեան և ամենայն կամքը կատարեցաւ և նորա եարլը (jarl) եղաւ։ Մինչև նախկին ժամանակաց մէջ՝ Նորուեգիոյ թագաւորութիւնն Ս. Ոլաֆի աւուրց կամ կալուածը կը համարուէր, որուն տէրն էր արքեպիսկոպոսն և թագաւորն նորա ձեռքէն կ'ընդունէր Ս. Ոլաֆի թագ։ Երիքի յաջորդն Հական Հալէզը (երկայնաստուն) դարձուց բոլոր եկեղեցւոյ խնչքերը և նորէն հաստատեց արքեպիսկոպոսը իւր նախկին իրաւանց և իշխանութեան մէջ։

digitised by A.R.A.R.@

գրութիւնը եղծանել։ Աղբատանոցները, հիւանդանոցները և օտարանոցները բնաջինջ ըրաւ. կուսաստանները փակեց և կուսանաց ցրուեց և հեռացուց։ Բայց ամէն բանէ յառաջ՝ Պապ եկեղեցւոյ հարուստ կալուածները յարբունիս գրաւեց։ Այն եօթը կալուածներէն՝ զոր Ցրլատ յատկացուցեր էր իւրաքանչիւր եկեղեցեաց՝ հինգը յափշտակեց և արքունի կալուածներուն վերայ աւելցուց, և միայն երկու անդ կամ հող թողուց իւրաքանչիւր եկեղեցւոյ։ Ամէն մէկ գիւղի մէջ միայն երկու եկեղեցականք պիտի լինէին, մէկ քահանայ և մէկ սարկաւագ, իսկ քահանայական ընտանեաց միւս անձինք բոլորն այլ արքունի տանը մէջ պաշտօններ ընդունեցան։ Ամուսնութեան մասին հաստատուած եկեղեցական խիստ կանոնադրութիւնք վերցուեցան, և թոյլ տրուեցաւ նոր՝ գէթ լուսթեամբ՝ որ երբուին մեռելոց վրայ եղած հեթանոս ողբերն և նորոգուին հեթանոս կոց պաշտամունք, հետևաբար ժողովուրդն այլ գոհ եղաւ այս նոր կարգադրութեամբք։

Գիտցաւ Պապ ճարտարութեամբ է նպաստ իրեն գործածել Ս. Ներսիսի ըրած մէկ սխալը։ Նորա սերտ առնչութիւնն կեսարիոյ հետ և ընդհանրապէս յայտնի հակամիտութիւնն առ յունական եկեղեցին՝ պէտք էր յուզել և գրգռել հայուն պէս ժողովուրդ մի, որ այնքան նախանձաւոր էր իւր ազգայնութեան։ Պապ՝ առանց հարցնելու կեսարիոյ՝ ինքնագլուխ նոր կաթողիկոս մ՝ընտրեց, զՑուսիկ՝ Աղբիանոսի տունէն, և այս կերպով՝ եկեղեցւոյ հալածիչն և քահանայից թշնամին՝ եղաւ հիմնադիրն Հայաստանի եկեղեցական անկախութեան։ Բնականաբար եկեղեցւոյ զօրաւոր իշխան մի, որպիսի էր Ս. Բասղեղ, որ նոյն ժամանակի կեսարիոյ մեծապաղչիան էր, առանց յուզուելու չընդունեցաւ այն հարուածը։ Փաստոս այս բանիս մասին հետևեալը կը գրէ [1]. « Բայց լսեց կեսարու արքեպիսկոպոսն, թէ սպանեցին մեծ հայրապետը Ներսէս, և անոր տեղը գրին զՑուսիկ՝ առանց իւր հաւանութեան. որովհետև չի տարին գնա, ինչպէս սովորութիւն էր, առ հայրապետն կեսարու ձեռնադրուելու համար. այս բանիս վրայ հայրապետն շատ զարմացաւ և բարկացաւ։ Առանց հայրապետին [2] կեսարու նահանգին սինոդոսի եպիսկոպոսներն ժողով մի գումարեցին, և թուղթ մ՝ուղարկեցին լի մեծաւ ցասմամբ [3], նոյնպէս ուրիշ թուղթ մ՝այլ առ Պապ թագաւորն։ Ոչնչացուցին կաթողիկոսութեան իշխանութիւնը [4] (յատուկ վճռով), թէ ով որ Հայաստանի կաթողիկոս լինի, միայն արքունի դրան հացը օրհնելու իշխանութիւն ունենայ, այլ ոչ բնաւ Հայոց եպիսկոպոսները ձեռնադրելու, ինչպէս որ սովորութիւն էր ի սկզբանէ։ Այն ժամանակէն սկսեալ վերցուեցաւ Հայոցմէ եպիսկոպոս ձեռնադրելու իշխանութիւնը։ Բայց անոնք՝ որ Հայոց գաւառներուն և կողմերուն եպիսկոպոս էին, միով բանիւ՝ որոնք որ այն ժամանակէն վերջը եպիսկոպոս կը լինէին Հայոց սահմաններուն մէջ, կեսարացւոց քաղաքը կ՝երթային և այնտեղ եպիսկոպոս կը ձեռնադրուէին։ Եւ որովհետև վերցուեցաւ Հայաստանէն գերագոյն իշխանութիւնն, այնուհետև եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունք չունէին Հայք. միայն թէ եպիսկոպոսաց մէջ աւագագոյնն՝ ամենէն վերը կը նստէր և թագաւորաց հացը կ՝օրհնէր »։ Նոյնպէս հայ կաթողիկոսաց յոյն ցուցակն այլ կը յիշէ սոյն պատմութիւնը [5]. « Ցուսիկ... Զանէն...

---

1. Փաստոս Ե. ԻԲ։

---

1. Սոյն բացատրութիւնը « առանց հայրապետին » Էմին կը թարգմանէ, « հայրապետին նախագահութեամբ » (sous la présidence du patriarche)։ Ցաւս է՝ թէ այստեղ խօսքը կեսարու արքեպիսկոպոսին վերայ չէ, այլ անկանոն կերպով ընտրուած հայ կաթողիկոսին վերայ է։ Համարելով նա իբր քանաքաքող հայրապետական գահուն, այն պատճառաւ եւ ոչ աթոռ և ոչ ձայն ունէր գաւառական սինեհոդոսին մէջ։

2. Այսինքն է՝ առ եկեղեցին Հայոց։

3. Իշխանութիւն կը նշանակէ՝ եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքը։

4. Combefis. historia Monothelitarum col. 288. Ἰουσὴκ.. ὁ Ζαγένης.. ὁ Ἀσπουρακέσης... οὗτοι οἱ τρεῖς τῆς Ἀχὰρ χώρας ἐπίσκοποι ἦσαν, ὄνομα μόνον ἔχοντες καθολικόν, ἐπίσκοπον χειροτονεῖν οὐκ ἐτόλμων, ἐπειδὴ διὰ τὸν θάνατον τοῦ ἁγίου Νερσέση ἐκωλύθησαν παρὰ τῶν ἀρχιεπισκόπων Καισαρείας αἱ χειροτονίαι τῶν ἐπισκόπων τῆς Μεγάλης Ἀρμενίας· εἶτα ὁ ἅγιος Ἰσαὰκ ἐλαβεν ἐξουσίαν χειροτονεῖν εἰς Ἀρμενίαν ἐπισκόπους

digitised by A.R.A.R.@

Ասպուրակէս... սոքա երեքը Աքարի նա-հանգին եպիսկոպոսունք էին, լոկ կաթողիկոսի անունը ունենալով, չէին համարձակեր եպիսկոպոս ձեռնադրել. որովհետև Ս. Ներսիսի մահուան պատճառաւ՝ կեսարու արքեպիսկոպոսներէն արգիլուեցան ձեռնադրութիւնք եպիսկոպոսաց մեծին Հայոց. վերջը Ս. Սահակ իշխանութիւն առաւ Հայաստանի մէջ եպիսկոպոս ձեռնադրելու »։

Այն տեղեկութիւններս ստոյգ չեն. արդէն սխալ է ինչ որ կը պատմէ յոյնն Ս. Սահակայ Նկատմամբ։ Ենթադրելով թէ կեսարիոյ հետ եղած միութեան կապն խզուեցաւ միայն յետ զահընկեցութեան Ս. Սահակայ, « իշխանութիւն առաւ — ἔλαβεν εξουσίαν » բառերը պէտք է բնականաբար այն իմաստով մեկնել կամ՝ հասկանալ՝ ինչ միտք որ ուզեր է տալ ինքը, այս է՝ « արքեպիսկոպոսուէն կեսարու παρὰ τοῦ ἀρχιεπισκόπου Καισαρείας » — այլ այս բանիս հակառակ կ'ելնեն իրական դէպքերն։ Չի ստոյգ է թէ Ս. Սահակ իւր պաշտաման մէջ լիուլի իշխանութեամբ գործեց և ամենուն կողմանէ համարուած էր օրինաւոր կաթողիկոս. սակայն նա բնաւ կեսարիայէն խնդրած չէ իւր իշխանութեան վաւերացումն։ Փաւստոսի պատմածն այլ մտէ է. որովհետև անբմբռնելի է, թէ Հայք ինչո՞ւ ասկաւին այնչափ իշխանութիւն կ'ընծայէին կեսարիոյ մեծապատիւին, — վերջնականապէս խզուած լինելով նորա հետ ամ և է միութեան կապ, — որով կարող կը լինէր նա իրենց հայրապետը զրկել իշխանութենէ և ընել իբր լոկ արքեպիսկոպոս մի, և բառնալ իսկ ամենէն աւելի կարևոր իրաւունքը՝ որ է ձեռնադրութիւնը։

Այլ ինքնին կը տրուի այս բանիս պատասխանը, երբ մտէն քննենք այն նուազ իրաւանց տէր եղող կաթողիկոսները, որք են Յուսիկ, Զաւէն, Շահակ և Ասպուրակէս։ Սոցա երեքն կը պատկանին՝ տէրութեան կուսակից կաթողիկոսական երկրորդ տանը, որ է՝ Աղբիանոսի ցեղին, այս պատճառաւ ևս ուղղամիտ մարդն չուզեց ճանչնալ զանոնք։ Այս ուրեմն ինչ որ կը պատմեն Փաւստոս և յոյնն, Հայաստանի մէջ ընդհանրապէս ընդունուած կարծիքն չէ, այլ հայ կղերին հոգևոր իշխանութեան նպաստաւոր կողման մեկնութիւնն է։ Չի սոյն կուսակցութիւնս միշտ յարեալ մնաց Գրիգորի տանը, և կեսարիոյ մէջ ձեռնադրուելուն պաշտպան հանդիսացաւ։ Այն ամէնքը, որ առանց այս կարևոր պայմաններուն յանձն առին կաթողիկոսութեան աստիճանը, յաչս բարեպաշտից իբր եկամուտք կամ՝ իրաւանց յափշտակիչք համարուեցան։ Բայց ասոնք չի հետևիր՝ թէ այնպիսի կերպով ընտրուած կաթողիկոս մի բնաւ եպիսկոպոսաց ձեռնադրութիւններ չէր ըներ. այլ միայն թէ կղերական կուսակցութիւնն զանոնք իբր ոչինչ կը համարէր, անկանոն կերպով ձեռնադրուած հայրապետ մի ընելով զանոնք. այս պատճառաւ սոյն կուսակցութեան պատկանող եպիսկոպոսք ուղղակի է կեսարիա կ'երթային ձեռնադրուելու համար։ Այս կերպով յաճախ եկան անտարակոյս ասա և անդ այն բոլոր այլևայլ եկեղեցական հերձուածք և հակառակութիւնք, որով մի քանի թեմեր կրկին եպիսկոպոսներ ունէին, յորոց մին՝ արքունեաց նպաստող կուսակցութեան կը պատկանէր, և միւսը՝ յոյն կուսակցութեան։

Շարայարելի



digitised by A.R.A.R.@